Անցեալ Ապրիլ ամսի 25 ին անակնկալ մահուամբ առ տէր փոխեցաւ Ս. Պետերբուրգում Սիմէօն Դաւթեան Աբամելիք—Լազարեանցն, հոգաբարձու հայ եկեղեցեաց մայրաքաղաքաց և Լազարեան ճեմարանի արևելեան լեզուաց։

Սուրբ Աթոռումն ի հանգիստ հոգւոյ հանգուցելոյն ս. պատարագ մատուցաւ և հոգեհանգիստ կատարուեցաւ, ներկայութեամբ բոլոր միաբանից։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ԲԱՂՈՒԱԾՔ.

4 ապրիլի.-Ս. Սինոդը ի տեղի հանգուցեալ Ադամ վարդապետ Տէր Նիկողայոսեանի՝ Նոր Նախիջևանի Սուրբ Խաչ վանից վանահայր նշանակեց Ս. Աթոռոյս միաբան բարեշնորհ Եփրեմ աբեղայ Սուքիասեանցին, պատուիրելով նորան հոգ տանել կալուածների արդիւնաւորութեանը, վանից շինութեանը և ժառանգաւորաց դպրոցի կառավարութեանը։

—

14 ապրելի.-Ս. Սինոդը ի նկատի առնելով Կողբի գործակալ Առաքել քահանայ Կարապետեանի կատարած չհաս պսակը արենական ազգակցութեան վեցերորդ աստիճանում, հրամայեց՝ ա) այդ պսակն համարել անվաւեր, բ) հրաժարեցուցանել յիշեալ քահանային գործակալութեան պաշտօնից՝ նորա տեղը կարգելով նոյն պաշտօնին արժ. Ղուկաս քահանայ Երիցեանցին, գ) Առաքել քահանայ Կարապետեանցին դադարեցուցանել քահանայագործութիւնից անսահման ժամանակով։

—

15 ապրիլի.-Ս. Սինոդը լսեց Նորին Վեհափառութեան Ամենայն Հայոց Կաթուղիկոսի կոնդակը ընդ համարաւ 151, ապրիլ 11, որի մէջ գրուած է. «Սինոդի Ս. Էջմիածնի ծանուցանեմք. զի անհասանելի կամաքն Աստուծոյ և շնորհիւ ողորմութեան Նորին ունիմք սկիզբն առնել վերանորոգութեան խախտեալ հիմանց և տանեաց Քրիստոսահիմն Տաճարի ընդհանրական

Մայր Աթոռոյս ընդ հսկողութեամբ գերազ. ճարտարապետ Միքայէլի Սալամբէկեանց և վերատեսչութեամբ Գերապատիւ Եպիսկոպոսացն Ներսիսի և Սարգսի. ուստի՝ առաջադրեմ դմին այժմէն իսկ պայմանաւորիլ ընդ յիշեալ գերազ. ճարտարապետի՝ վասն անդորրութեամբ հոգւոյ և մնաց շարունակելոյ զյիշեալ վերանորոգութիւն և նոր ի նորոյ կառուցանելոյ զՏպագրատուն Մայր Աթոռոյս, զորմէ ծանուցեալ եմք դմին կոնդակաւ Մերով ի 28 մարտի ընդ համարաւ 132։» Ս. Սինոդը լսեց նաև Պ. Միք. Սալամբէկեանցի Տաճարի վերանորոգութեան համար կազմած նախագիծը, որ պարունակում է 16 յօդուած և նորա աշխատութեան վարձատրութեան չափը որոշող պայմանները։ Եւ այս հիմանց վերայ կռեց նորա հետ դաշն ութ յօդուածով։

—

27 ապրելի.-Ս. Սինոդը յետ լսելոյ Վրաստանի և Իմերէթի Հայոց Կոնսիստորիայի յայտարարութիւնը ի 11-էն մարտի ընդ համարաւ 954 հրամայեց. 1) «Գօրու Կասպ գիւղի եկեղեցում կատարուած, (յ3 դեկ. յօդ. 8) ապօրինի պսակը Գրիգորի Տէր Յակովբեանց ընդ այրոյն Զքոյեանց (նոյն և Աքոյեանց) համարել անվաւեր, 2) պսակադիր Բաղդասար քահանային առաքել յայտաշխարութիւն Սևանի վանքը հինգամեայ ժամանակով, արգելելով քահանայագործութիւնից և պահանջելով ապօրինի պսակադրութիւնից ստացած 100 ռուբլին յօգուտ որբոց և այրեաց հոգևորականաց վիճակին, 3) մեղսակից Գրիգոր աւագ քհ. Փանեանցին, խնայելով նորա ծերութեանը, դադարեցուցանել քահանայագործութիւնից միայն վեց ամիս, 4) Ստեփաննոս աւագ քհ. Տէր Ստեփանեանցին ենթարկել եկեղեցական ապաշխարանաց առ դրան եկեղեցւոյն 3 ամիս ժամանակաւ, նախապէս հրաժարեցուցանելով նորան Գօրու Հոգևոր կառավարութեան անդամութեան պաշտօնից, 5) քննչին տրուած ծախսը՝ 30 ռ. պահանջել հաւասարապէս վերոյիշեալ երեք քահանաներից։